

Ի. Կ. ԲԱՐԱՋԱՆՅԱՆ

ՅՈՐԵՆԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՓՈՐՁԵՐՆ ԱՊԱՐԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Աշնանացան և գարնանացան ցորենների պարարտացման հարցերին նվիրված մեր ուսումնասիրությունները տարվել են Ապարանի շրջանի առաջին ենթագոտում՝ չոր լեռնատափառտաճային մասում, որը գտնվում է ծովի մակերևույթից 1400—1800 մետր բարձրության վրա: Հողային ծածկոցն այդ գոտում ներկայացված է լեռնային, հումուսի փոքր պարունակություն ունեցող սևահողերով և մուգ շագանակագույն հողերով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 496—597 մմ-ի սահմաններում: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 5,2—8,5°: Բացարձակ նվազագույնը հասնում է մինուս 25—29-ի: Բացարձակ առավելագույնը՝ 35-ի: Անսառնամանիք ժամանակաշրջանը տևում է 160—185 օր [2]:

Հայտնի է, որ ցորենի ծլման համար անհրաժեշտ է 3—4° ջերմություն, իսկ աճման համար անհրաժեշտ ընդհանուր ջերմությունը կազմում է 2000° [7]:

Ուսումնասիրություններից պարզվել է, որ Ապարանի շրջանում մշակվող աշնանացան ցորենի Ուլրախնկա և Կ. սլֆահատ սորտերը լավ են աճում, երբ օդի տարեկան ջերմությունը տատանվում է 4—7° սահմաններում: Ամենաշոգ ամիսներին այն հասնում է 20—32°, իսկ ամենացուրտ ամիսներին իջնում է մինչև —25—30°:

Մթնոլորտային տեղումների քանակը այդ սորտերի նորմալ աճի համար, պետք է լինի 350—550 մմ-ից ոչ պակաս [1]:

Ապարանի շրջանն իր ջերմության և տեղումների քանակով նպաստավոր է հացահատիկային կուլտուրաների մշակության համար: Հետևապես, բարձր ազդոտելիակայի կիրառման պայմաններում ճիշտ պարարտացումից կարելի է ստանալ մեծ էֆեկտ:

Մեր փորձերը դրվել են Քուչակ գյուղի Ջափարիձեի անվան կոլտնտեսությունում «Աղբրի ջրեր» և «Չայլախներ» կոչվող հանդամասերում՝ սևահողերի և շագանակագույն հողերի վրա: Ստորև բերում ենք այդ տեղամասերում կատարված հողային կտրվածքների նկարագրությունը և քիմիական անալիզի տվյալները:

48 կտրվածքը արվել է «Աղբրի ջրեր» կոչվող տեղամասում, հարթության վրա:

0—25 սմ: Սև, մանր կնձկային ամուր սորոկտուրայով կավահող, վերին շերտում փոփր, ցածր մասում խտացած, ամրացած: Անցումը մյուս հորիզոնին աննկատելի է (նմուշը վերցված է 0—20 սմ շերտից):

25—100 սմ: Սև, հզոր, ծանր կավային, խոնավ, անցումը մյուս հորիզոնին՝ աստիճանական (նմուշը վերցված է 50—60 սմ շերտից):

100 սմ խորը: Սև, հզոր, ծանր կավային, խոնավ, անցումը մյուս հորիզոնին՝ աստիճանական (նմուշը վերցված 103—113 սմ շերտից):

4 կտրվածքը արվել է «Ձայլախնե» կոշվող տեղամասում, հարթության վրա:

0—20 սմ: Շագանակագույն, վերին մասում փոշիացած կավահող, ստորին՝ խիտ և ամրացած, թույլ արտահայտված ստրուկտուրայով: Անցումը աստիճանական (նմուշը վերցված է 6—20 սմ խորությունից):

20—35 սմ: Նուրբաման, միայն ավելի խիտ, ամրացած, պակաս խոնավ, անցումը մյուս հորիզոնին նկատելի է (նմուշը վերցված է 22—32 սմ-ից):

35—80 սմ—զորը ծանր կավահող, ունի մուգ գույնի հումժախի հոսքատեղեր, խոնավ, քարերով հարուստ, անցումը նկատելի, 50—60 և 70—80 սմ և խորը՝ ճալաքարային շերտ:

Հողի նմուշներում կատարված ազոտքիմիական անալիզի տվյալները բերվում են ստորև (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

48 և 4 հողային կտրվածքների ազոտքիմիական անալիզի արդյունքները

Կտրվածքը	Հորիզոնը սմ	Կմախք 1 մմ	Մանրահող 1 մմ	Հիզրոսկոպ. խոնավութ.	CaCO ₃	% -ով բացարձակ չոր հողի նկատմամբ		100 ք հորվածքում մասնակի P ₂ O ₅	Սուսպենդիայում (1:2,5)	
						հումուս	ընդհ. N		ջրային	KCl-ի
4	0—20	0,45	97,55	3,29	չկա	2,35	0,18	7,5	5,46	4,92
	20—35	—	100	3,86	»	2,08	—	2,5	5,38	4,76
	35—80	16,29	83,71	5,03	»	0,85	—	25,0	6,25	5,66
	80 և խորը	8,16	91,84	5,34	»	0,54	—	25,0	6,86	5,52
48	0—25	1,49	98,51	8,88	չկա	2,36	0,12	7,5	6,56	5,96
	25—100	0,28	99,72	9,35	»	2,13	—	5,0	6,64	5,96
	100—113	3,16	96,84	7,70	»	1,12	—	20,0	6,83	6,65

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից փորձերի տակ եղած հողերը ապահովված չեն բավարար քանակի սննդանյութերով: Հետևապես, այստեղ պարարտանյութերի ճիշտ կիրառումից պետք է սպասել մեծ էֆեկտ:

Հետազոտության մեթոդիկան

Մեր ուսումնասիրությունները հիմնականում տարվել են դաշտային փորձի մեթոդով: Իսկ որոշ հարցեր հետազոտվել են նաև վեգետացիոն փորձի միջոցով:

Դաշտային փորձերը դրվել են արտադրության պայմաններում: Աշնանացան ցորեններից փորձարկվել են Ուկրաինկա և Կ. սլֆահատ սորտերը, իսկ դարնանացանից՝ Կոնդիկ (էրինացեումը): Փորձերը դրվել են 4 կրկնողությամբ Ամեն մի փորձամարզի մեծությունը եղել է 126 ք. մ: Բերքի հաշվառումը կատարվել է 100 ք.մ փորձամարզից: Պարարտանյութերը տրվել են աշնանը ցանքից մի քանի օր առաջ, կուլտիվացիայի տակ՝ հեկտարին 60 կգ ներազդող նյութի հաշվով: Կիրառվել են ամոնիումական սելիտրա (N—34%), հասարակ սուպերֆոսֆատ (18% P₂O₅) և կալիում քլորիդ (55%) K₂O-ի պարունակությամբ:

Կշռվել է փորձամարզի ողջ բերքը, այնուհետև փորձնական խրձի մեթոդով որոշվել է խոնավությունը և հատիկի ելունքը:

Փորձի տվյալները մշակվել են վարիացիոն ստատիստիկայի մեթոդով: Հատիկի մեջ որոշվել է հում պրոտեինի պարունակությունը: Հողի և հատիկի քիմիական անալիզը կատարվել են Ագրոքիմիայի լաբորատորիայի քիմիկոսներ Օ. Դարբինյանի, Օ. Դասպարյանի և Ն. Մելքոնյանի կողմից, հողա-կրորվածքների նկարագրությունը կատարել է Վ. Լ. Անանյանը:

Ընդհանուր ազդուր որոշվել է Կյելդալի մեթոդով, հումուր՝ Մովսիսյանի, մատչելի ֆոսֆորը՝ Կիրսանովի, մատչելի կալիումը՝ Պեյզեյի մեթոդով:

PH-ը որոշվել է պոտենցիոմետրիկ, իսկ կարբոնատները՝ կալցիմետրով:

ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԱԶԳՆՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՅՈՐԵՆԻ ԲԵՐՔԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՎՐԱ ԱՊԱՐԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Արտադրության պայմաններում պարարտացման դաշտային մեր փորձերը գրվել են հետևյալ սխեմայով՝ 1) առանց պարարտացման, 2) N, 3) NP, 4) NPK: Վեգետացիայի ընթացքում կատարվել են մի շարք ֆենոլոգիական դիտումներ: Ստորև բերում ենք այդ փորձերից մեկի տվյալները (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հանքային պարարտանյութերի ազդեցությունը աշնանացան ցորենի Ուկրաինյան սորտի աճի վրա (1951 թ.)

Փորձի սխեման	Մեկ քառ-կուսի մետրի վրա եղած ցողունների քանակը	Երկարությունը սմ-ով		Մեկ բույսի վրա եղած հասկերի թիվը	Մեկ հատիկի հատիկի կշիռը գ-ով	1000 հատիկի (բացարձակ) կշիռը գ-ով
		ցողունի	հասկի			
Առանց պարարտացման	599.4	110	6.0	1.59	0.838	39,86
N ₆₀	684.8	121	6.1	1.76	0.846	40,73
N ₆₀ P ₆₀	688.1	128	6.2	2.14	0.936	40,21
N ₆₀ P ₆₀ K ₆₀	743.2	128	6.3	2.24	0.903	39,81

Տվյալներից երևում է, որ պարարտանյութերը դրական են ազդել բույսերի աճի վրա. նրանք եղել են ավելի բարձր, ուժեղ թիփակալված, և մեկ հասկի հատիկի կշիռը ստացվել ավելի մեծ՝ կոնտրոլի համեմատությամբ: Եթե տվյալները դիտենք ըստ առանձին վարիանտների, ապա կտեսնենք, որ ամենից լավ աճ եղել է NPK վարիանտում, որտեղ մեկ բույսի վրա եղած հասկերի թիվը 2,24 է, կոնտրոլի 1,59-ի դիմաց:

Հետաքրքիր է նշել ֆոսֆորի դրական ազդեցությունը հատիկի քաշի վրա. այսպես, օրինակ՝ NP վարիանտում մեկ հասկի հատիկի կշիռը եղել է 0,936 կոնտրոլի՝ 0,838-ի դիմաց, իսկ N վարիանտում այն կազմել է 0,846 գ: Հետևապես միայն ֆոսֆորական պարարտանյութի շնորհիվ մեկ հասկի մեջ հատիկների կշիռը ավելացել է 0,09 գ-ով: Վերջինս բացատրվում է ֆոսֆորի ֆիզիոլոգիական դերով՝ նրա ներկայությամբ բույսի մեջ ածխաջրերը ավելի ինտենսիվ են կուտակվում:

Ցորենի բերքի վրա պարարտանյութերի թողած բարձր էֆեկտը կարելի է տեսնել ստորև բերված տվյալներից (աղյուսակ 3):

Հանքային պարարտանյութերի ազդեցությունը աշնանացան ցորենի Ուկրաինիա սոսրի բերքի վրա ց/հ

Փորձի սխեման	1951 թ.*				Հում պրո- տենի % բացարձակ չոր նյութից	1954 թ.				Հում պրո- տենի % բացարձակ չոր նյութից
	բերքը	բերքի հավե- լումը	±m	t		բերքը	բերքի հավե- լումը	±m	t	
Առանց պարար- տացման	22,66	—	—	—	10,62	3,19	—	0,55	—	11,23
N ₈₀	30,16	7,5	0,81	9,20	11,14	5,35	2,16	0,32	3,4	14,71
N ₈₀ P ₈₀	31,16	8,5	0,58	14,65	10,62	6,46	3,27	0,36	3,5	13,97
N ₈₀ P ₈₀ K ₈₀	32,39	9,7	1,23	0,26	11,14	6,58	3,39	0,56	4,3	15,39

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները 1951 թ. ցորենի բերքատվությունը անհամեմատ բարձր է, քան 1954 թ. Հնայած երկու տարիներին էլ փորձերը դրվել են սեահոզերի վրա, ցելադաշտում:

Բերքատվության տարբերությունը հիմնականում պետք է բացատրել 1953 թ. աշնան երաշտով: 1950 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին տեղումների քանակը կազմել է 131,3 մմ, 1953 թ. այդ նույն ամիսների 35,6 մմ դիմաց: 1953 թվականի աշնան բացառիկ չորային պայմանների պատճառով աշնանացանները վատ ծլեցին, վատ թփակալեցին, որի հետևանքով ցանքերը նոսր եղան: Չնայած դրան, մեր փորձը շնորհակցինք և կատարեցինք բերքի հաշվառում, բացառիկ չորային պայմաններում պարարտանյութերից ստացված էֆեկտը պարզելու համար:

Աղյուսակի տվյալներից կարելի է տեսնել, որ ամենից բարձր էֆեկտ ստացվել է լրիվ պարարտացումից: 1951 թ. NPK-ից բերքի հավելումը կազմել է 9,73 ց/հ, կամ 43%, իսկ 1954 թ. այդ նույն վարիանտը տվել է 3,39 ց/հ կամ 105%: Այնուհետև, բարձր էֆեկտ է ստացվել նաև առանձին ազոտական պարարտանյութի կիրառումից: Ըստ առանձին էլեմենտների էֆեկտիվության, սննդատարրերը ունեն հետևյալ նվազող հաջորդականությունը՝ N>P>K:

Պարարտանյութերը միևնույն ժամանակ բարձրացրել են հում պրոտենի պարունակությունը ցորենի մեջ: Այդ երևույթը առավելապես ցայտուն կերպով էրևում է 1954 թ. փորձերի տվյալներից: Հետևապես ճիշտ պարարտացման միջոցով միանգամայն հնարավոր է ստանալ լավ որակի բարձր բերք: Ինչպես երևում է տվյալներից 1954 թ. ստացված բերքի որակը ավելի բարձր է, քան 1951 թ., որը հիմնականում պետք է բացատրել այդ տարվա համեմատաբար չորային պայմաններով:

Աշնանացան ցորենի սնուցումը

Աշնանացան ցորենի պարարտացման սխեմանում մեծ նշանակություն ունի նաև նրա վաղ զարնանային սնուցումը: Հատկապես մեծ է սնուցման նշանակությունը այն դաշտերի համար, որոնք այս կամ այն պատճառով աշնանից պարարտանյութեր չեն ստացել:

* 1951 թ. փորձերը (բացի զարնանացանի սնուցման փորձից) դրել է Գ. Բ. Բաբայանը, բերքի հաշվառումը և տվյալների մշակումը կատարվել է մեր կողմից:

Աշնանացան ցորենի բերքատվության վրա սնուցման ազդեցությունը պարզելու նպատակով, փորձերը զրվել են «Աղբրի ջրեր» տեղամասում՝ սևահողի վրա: Սնուցումը կատարվել է վաղ գարնանը, փոցխելուց առաջ: Փորձերում կատարված մի շարք դիտումներից պարզվել է, որ սնուցումը դրական ազդեցություն է ունեցել աշնանացան ցորենի աճի վրա: Այսպես, օրինակ՝ NPK վարիանտում բույսերի բարձրությունը եղել է 110 սմ կոնտրոլի՝ 95 սմ-ի դիմաց, իսկ մեկ բույսի վրա հասկերի թիվը կազմել է 2,03 կոնտրոլի՝ 1,61-ի դիմաց:

Պարարտացման շնորհիվ մեկ հասկի մեջ եղած հատիկների քաշը նույնպես բարձրացել է: Հետևապես պարարտանյութերը դրական ազդեցություն են ունեցել բերքն ապահովող բոլոր ցուցանիշների վրա: Այդ են հաստատում բերքատվության տվյալները (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Սնուցման ազդեցությունը աշնանացան ցորենի Ուկրաինա սորտի բերքի վրա ց/հ

Փորձի սխեման	1951 թ.				Հում պրո- տեկների բացարձակ շորնյութից	1954 թ.				Հում պրո- տեկների բացարձակ շորնյութից
	միջին բերքը	բերքի հավե- լումը	± m	t		միջին բերքը	բերքի հավե- լումը	± m	t	
Առանց պարար- տացման	13,63	—	—	—	13,04	3,19	—	0,55	—	11,23
N ₄₀	19,76	6,13	1,15	5,33	13,19	6,52	3,33	0,39	5,99	14,93
N ₄₀ P ₄₀	20,42	6,79	0,47	14,45	13,17	5,48	2,29	0,82	2,49	15,62
N ₄₀ P ₄₀ K ₄₀	20,14	6,51	1,06	6,14	13,71	5,44	2,25	0,65	2,54	14,82

Այսպիսով, ինչպես 1951 թ. կլիմայական բարենպաստ, այնպես էլ 1954 թ. երաշտային պայմաններում սնուցումից ստացվել է մեծ էֆեկտ: Միայն ազոտով սնուցելիս ստացվել է համարյա միևնույն էֆեկտը, ինչ-որ ֆոսֆորի և կալիումի հետ նրա համատեղ կիրառումից: Այդ պատճառով հանձնարարվում է ֆոսֆորով և կալիումով հացահատիկները պարարտացնել հիմնական վարի ժամանակ:

Սնուցման ժամանակ կիրառված պարարտանյութերը նպաստել են հատիկի մեջ հում պրոտեկների ավելացմանը:

Նկատվել է, որ 1954 թ. ստացվել է ավելի բարձրորակ հատիկ, որը պետք է բացատրել խոնավության տարբերությամբ: Հայտնի է, որ խոնավության առատության պայմաններում հատիկի մեջ սպիտակուցների քանակությունը ցածր է լինում: Աշնանացան ցորենի գարնանային սնուցման հարցի ուսումնասիրությունը մեր կողմից տարվել է նաև 1952 թվականին «Չայլախներ» կոշվող տեղամասում Կ. ալֆահատ սորտի վրա: Ստորև բերում ենք այդ փորձի բերքատվության տվյալները (աղյուսակ 5):

Այս տվյալները ցույց են տալիս, որ ցորենի բերքատվության վրա պարարտանյութերի ազդեցությունը ցածր է եղել: Այս երևույթը ևս բացատրվում է մթնոլորտային տեղումների խնայվարար քանակով: Իհնև աշնան ամիսներին առատ անձրևների շնորհիվ բույսերը փարթամորեն աճել ու թփակալել են, բայց գարնան ընթացքում, տեղումների քանակի անբավարար լինելու հետևանքով, նրանց զարգացման հիմնական ֆազերը՝ հատկապես մինչև կաթնային հասունացումը անցել են աննորմալ պայմաններում, որը խիստ բացասաբար է անդրադարձել բերքի կազմակերպման վրա: Եթե 1951 թ. մայիս, հունիս և հուլիս ամիսների տեղումների քանակը եղել է 308,9 մմ, ապա 1952 թ. այդ նույն

ամիսների ընթացքում նա եղել 212,4 մմ, այսինքն 96,5 մմ-ով պակաս: Ուստի բույսերը թույլ են աճել, հասկերի թիվը մեկ բույսի վրա պակաս է եղել, հատիկների բացարձակ քաշը պակասել է (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Սնուցման ազդեցությունը աշնանացան ցորենի (Կ. սլֆահաս) բերքի քանակի և բույսերի աճի վրա (1952 թ)

Պարարտացման ժամկետը		Մեջին բերքը ց/հ		+ m		- m		Սնուցման ազդեցությունը բերքի վրա		Սնուցման ազդեցությունը բույսերի վրա	
հիմնական վարի տակ	գարնանը՝ սնուցում	Մեջին բերքը ց/հ	բերքի հասկերի մեջին ց/հ	+	-	Սնուցման ազդեցությունը բերքի վրա	Սնուցման ազդեցությունը բույսերի վրա	1000 հատիկի կշիռը	1000 հատիկի կշիռը	հատիկի մեջին ց/հ	հատիկի մեջին ց/հ
Առանց պարարտացման	—	9,23	—	0,26	—	70,4	5,3	0,47	35,8	13,65	13,65
N ₇₅	—	10,21	0,98	0,44	1,92	75,1	5,8	0,56	34,3	13,74	13,74
—	N ₃₀	10,54	1,31	0,17	4,23	73,3	5,6	0,50	34,7	14,31	14,31
N ₇₅ P ₇₅	—	11,06	1,83	0,20	5,55	74,7	5,2	0,50	35,1	13,97	13,97
—	N ₃₀ P ₃₀	10,78	1,55	0,77	3,15	73,5	5,7	0,51	34,1	15,05	15,05
N ₄₅ P ₇₅	N ₃₀	12,25	3,02	0,22	8,88	74,6	5,2	0,60	34,8	14,36	14,36
P ₇₅ K ₆₀	—	8,26	0,97	0,40	—	68,4	6,4	0,46	32,7	13,79	13,79
P ₇₅ K ₆₀	N ₃₀	12,20	2,97	0,26	8,03	77,1	5,4	0,64	34,5	14,25	14,25
N ₄₅ P ₇₅ K ₆₀	N ₃₀	13,16	3,93	0,35	8,93	76,1	5,1	0,51	34,5	14,25	14,25
N ₇₅ P ₇₅ K ₆₀	—	12,59	3,36	0,44	6,59	74,6	5,8	0,55	34,0	13,79	13,79

Չնայած չորային պայմաններին փորձում ստացվել են որոշ օրինաչափություններ: Պարարտացված բույսերի վարիանտներից ստացվել է բերքի նկատելի հավելում, որը տատանվել է հեկտարից 0,98—3,93 ցնառների սահմաններում: Այս հավելումը անտեսել չի կարելի հատկապես ցածր բերքատվության նման պայմաններում: Գարնանային սնուցման արդյունքը տատանվել է՝ 1,91—1,65 ց/հ միջև: Այս փորձում ևս PK վարիանտից էֆեկտ չի ստացվել, որը պետք է բացատրել հողի մեջ եղած մատչելի ազոտի խիստ անբավարար քանակով, առանց որի բույսերը շատ ընկճված են լինում: Վաղ գարնանից, սնուցման ձևով տրված ազոտական պարարտանյութերի շնորհիվ, հատիկի մեջ բարձրացել է հում պրոտեինի քանակությունը: Այսպես, օրինակ՝ աշնանից տրված, NP վարիանտում նրա պարունակությունը հավասար է 13,97% -ի, իսկ նույն պարարտանյութերը գարնանը տալու դեպքում՝ 15,05%: Այս կրևությունը կրկնվել է մնացած վարիանտներում:

Ազոտի անոդ դոզաների ազդեցությունը աշնանացան ցորենի բերքի քանակի և որակի վրա

Հայտնի է, որ ցանքաշրջանառության այն դաշտում, որտեղ մի քանի տարի շարունակ, առանց պարարտացման հացահատիկային կուլտուրաներ են մշակվում, հողն աղքատանում է սննդանյութերով: Հետևապես անհրաժեշտ է լինում ավելի շատ պարարտանյութեր կիրառել, քան ցանքաշրջանառության այն դաշտում, որտեղ նախորդը եղել է թիթեռնածաղկավոր բույս կամ ցեղադաշտ:

Ազոտի աճող դոզաների ազդեցության ուսումնասիրությունը աշնանացան ցորենի բերքատվության վրա առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: 1952 թ. սկսած մեր կողմից ուսումնասիրվել է ազոտի աճող դոզաների ազդեցությունը, ցորենի բերքի քանակի և որակի վրա: Փորձերը դրվել են «Ձայլախներ» կոչվող հանգամասում, հետևյալ սխեմայով՝ 1) առանց պարարտացման,

2) $P_{75}K_{60}$, 3) $N_{30}P_{75}K_{80}$, 4) $N_{60}P_{75}K_{80}$, 5) $N_{75}P_{75}K_{60}$, 6) $N_{90}P_{75}K_{60}$, 7) $N_{120}P_{75}K_{60}$,
 8) $N_{120}P_{120}K_{60}$, 9) $N_{150}P_{120}K_{60}$, 10) $N_{180}P_{180}K_{90}$

1954 թ. փորձերը դրվել են «Աղբրի ջրեր» կոչվող հողամասում սևահողի վրա մի փոքր պարզեցված սխեմայով.

1) Առանց պարարտացման, 2) $N_{60}P_{75}K_{60}$, 3) $N_{75}P_{75}K_{60}$ և 4) $N_{90}P_{75}K_{60}$:
 Փորձերից մեկում կատարվել է բույսերի ցրտադիմացկունությունը վրա պարարտանյութերի ազդեցությունը վերաբերյալ դիտումներ (ստորև բերում ենք այդ տվյալները, աղյուսակ 6):

Աղյուսակ 6

Պարարտացման ազդեցությունը կարմիր սլֆահաս սորտի ցրտադիմացկունության վրա 1952 թ.

Փորձի սխեման	Բույսերի թիվը 1 ք. մ		Ցրտահարված բույսերի թիվը	Ցրտահարության % -ը
	աշնանը	դարձանը		
Առանց պարարտացման	312	239	73	23,39
$P_{75}K_{60}$	376	239	137	36,43
$N_{30}P_{75}K_{60}$	364	300	64	17,58
$N_{60}P_{75}K_{60}$	344	285	59	17,15
$N_{90}P_{75}K_{60}$	366	295	71	19,39
$N_{120}P_{75}K_{60}$	389	333	57	14,39
$N_{120}P_{120}K_{60}$	393	342	51	12,97

Ինչպես կարելի է տեսնել բերված տվյալներից պարարտացված վարիանտներում ցրտադիմացկունությունը բարձր է եղել, բացի PK վարիանտից, որտեղ հակառակ պատկերն է ստացվել: Դա պետք է բացատրել փորձադաշտում աղյուսակի անբավարար պարունակությամբ, որի պատճառով աշնանը բույսերը թույլ են աճել, թվախալվել, հետևապես, և վատ են ձմեռել:

Ի դեպ, Ազոտբիոխիյի լաբորատորիայի գիտ. աշխատող՝ Լ. Միքայելյանի աշխատանքներից պարզվել է, որ պարարտացման միջոցով կարելի է բարձրացնել խաղողի վազի ցրտադիմացկանությունը [5]:

Մեր փորձում ցորենի ցրտադիմացկունության վրա դրականապես են ազդում ֆոսֆորի բարձր դոզաները: Կատարված ֆինոլոգիական դիտումները ցույց են տալիս, որ պարարտացումը դրական ազդեցություն է ունեցել բույսերի աճի ու զարգացման վրա: Այսպես, օրինակ՝ $N_{180}P_{180}K_{90}$ վարիանտում բույսերի բարձրությունը եղել է 91,13 սմ կոնտրոլի 71,4-ի դիմաց, իսկ հասկի մեծությունը՝ 6,2 սմ, չպարարտացված փորձամարզի 4,3 սմ-ի դիմաց: Մեծ է եղել նաև հատիկի ելը և բարձրացել է աշնանացան ցորենի բերքատվությունը: Այլ ևն հաստատում ստորև բերված տվյալները (աղյուսակ 7):

Չնայած անբարենպաստ պայմաններին, պարարտացումից ստացվել է բերքի զգալի հավելում, որը տատանվում է 1,92—11,09 ց/հ միջև: Ամենից բարձր է ֆեկտ ստացվել է $N_{180}P_{180}K_{90}$ վարիանտից, որը տվել է 11,09 ց/հ լրացուցիչ բերք: Ինչ խոսք այդ էֆեկտը ավելի մեծ կլիներ խոնավության բավարար բանակի պայմաններում:

Ազոտի փորձարկված բոլոր դոզաների դեպքում ստացվել է բերքի զգալի

Ազոտի ածող դոզաների ազդեցությունը աշնանացան ցորենի բերքի վրա ց/5

Փորձի սխեման	1952 թ. Կ. սլֆահատ				1954 թ. Ուկրաինկա					
	միջին բերքը		բերքի հազվելումը		±	-	միջին բերքը		բերքի հազվելումը	
	+	-	+	-			+	-		
Առանց պարարտացման	7.77	—	0.15	—	3.19	—	0.55	—	—	—
P ₇₅ K ₆₀	7.86	0.09	0.50	0.17	—	—	—	—	—	—
N ₃₀ P ₇₅ K ₆₀	9.69	1.92	0.47	3.92	—	—	—	—	—	—
N ₆₀ P ₇₅ K ₆₀	11.49	3.72	0.83	4.43	6.58	3.59	0.56	4.29	—	—
N ₇₅ P ₇₅ K ₆₀	13.65	5.88	0.35	15.47	7.65	4.46	1.28	3.19	—	—
N ₉₀ P ₇₅ K ₆₀	13.50	5.73	0.24	20.46	8.11	4.92	1.11	4.0	—	—
N ₁₂₀ P ₇₅ K ₆₀	14.85	7.08	0.56	12.20	—	—	—	—	—	—
N ₁₂₀ P ₁₂₀ K ₆₀	16.32	8.55	0.70	12.88	—	—	—	—	—	—
N ₁₅₀ P ₁₂₀ K ₆₀	17.33	9.56	1.30	7.30	—	—	—	—	—	—
N ₁₅₀ P ₁₅₀ K ₉₀	18.86	11.09	1.53	7.20	—	—	—	—	—	—

Հավելում: Այստեղ մեր կողմից չի հայտնաբերվել այն սահմանը, որից հետո ազոտի բարձր դոզաների կիրառումից կարող է ստացվել բերքի անկում: Այս երևույթը մեկ անգամ ևս հաստատում է փորձադաշտի հողերի, մատչելի սննդանյութերով խիստ աղքատ լինելը:

PK-ի կիրառումից, ինչպես մեր մյուս փորձերում, այս դեպքում ևս էֆեկտ չի ստացվել. ազոտի խիստ պակասության դեպքում ֆոսֆորից և կալիումից էֆեկտ չի ստացվել: 30 կգ ազոտի կիրառումից նկատելի էֆեկտ չի ստացվել: Թեև ամենից բարձր բերք տվել է N₁₈₀P₁₈₀K₃₀ կոմբինացիան, մեր կարծիքով առայժմ տնտեսապես էֆեկտիվ չի լինի օգտագործել կրկնակի քանակությամբ պարարտանյութեր. կարելի է ներկայիս կիրառվող ազոտեխնիկական ֆոնի վրա հանձնարարել ազոտի 75—90 կգ դոզա (ներազդող նյութի հաշվով):

Բերքի նմուշներում ուսումնասիրվել է ազոտի բարձր դոզաների ազդեցությունը հում պրոտեինի պարունակության վրա. ստորև բերում ենք այդ տվյալները (աղյուսակ 8):

Ազոտի ածող դոզաների ազդեցությունը հում պրոտեինի պարունակության վրա (բաց չոր նյութից, %-ով)

Փորձի սխեման	Կ. սլֆահատ 1952 թ.		Ուկրաինկա 1954 թ.	
	խոնավությունը	հում պրոտեին N×5,7	խոնավությունը	հում պրոտեին N×5,7
Առանց պարարտացման	10,91	13,97	11,51	11,23
P ₇₅ K ₆₀	10,86	13,34	13,34	—
N ₃₀ P ₇₅ K ₆₀	10,89	13,34	—	—
N ₆₀ P ₇₅ K ₆₀	10,96	13,45	11,51	15,39
N ₇₅ P ₇₅ K ₆₀	10,79	13,32	11,05	14,19
N ₉₀ P ₇₅ K ₆₀	10,71	13,51	11,02	14,48
N ₁₂₀ P ₇₅ K ₆₀	10,85	13,85	—	—
N ₁₂₀ P ₁₂₀ K ₆₀	10,71	14,48	—	—
N ₁₅₀ P ₁₂₀ K ₆₀	10,62	15,45	—	—
N ₁₅₀ P ₁₅₀ K ₉₀	10,65	14,82	—	—

Պարարտացման շնորհիվ ստացվել է բարձր և լավորակ բերք, պրոտեին-ներով ավելի հարուստ:

Հատիկավորված սուպերֆոսֆատի ազդեցությունը աշնանացան ցորենի բերքի վրա

Փորձերը դրվել են 1952 թ. «Չայլախներ» կոչվող տեղամասում: Բոլոր դեպքերում գրանուկացված սուպերֆոսֆատը տրվել է ցանքի ժամանակ սերմի հետ, հեկտարին 10 կգ P_2O_5 -ի հաշվով: Ստորև բերում ենք բերքատվության տվյալները (աղյուսակ 9):

Աղյուսակ 9

Գրանուկացված և փոշի սուպերֆոսֆատի ազդեցությունը
4. ուֆահատի բերքի վրա ց/հ 1952 թ.

Փորձի սխեման	Միջին բերքը	Բերքի հավելումը	$\pm m$	t
Առանց պարարտացման	8,48	—	—	—
$N_{75}P_{75}$	11,16	2,68	0,78	3,06
$N_{75}P_{10}$	12,34	3,86	0,81	4,24
$N_{75}P_{30}$	11,11	2,63	0,62	3,54
$N_{45}P_{10} + N_{30}$	12,59	4,11	0,43	6,90
$N_{45}P_{40}P_{10}N_{30}$	11,78	3,30	0,49	5,18
$N_{775}P_{75}K_{60}$	12,69	4,21	0,38	7,50
$N_{75}N_{60}P_{10}$	11,95	3,47	0,59	5,28
$N_{45}K_{60}P_{65}P_{10}$	12,28	3,80	0,59	5,28
$N_{45}P_{65}K_{60}P_{10} + N_{30}$	12,85	4,37	0,48	7,28

Փորձարկված վարիանտներից ամենից բարձր բերք ստացվել է $N_{45}P_{65}K_{60}P_{10} + N_{30}$ կոմբինացիայից, որտեղ լրացուցիչ բերքը կազմել է 4,37 ց/հ:

Այնուհետև նկատվել է, որ սերմի հետ տրված փոքրաքանակ գրանուկացված սուպերֆոսֆատի օգտագործման գործակիցը շատ մեծ է: Այսպես, օրինակ՝ $N_{75}K_{60}P_{10}$ վարիանտից ստացված բերքի հավելումը կազմում է 3,5 ց/հ, իսկ $N_{75}P_{75}K_{60}$ — 4,2 ց/հ:

Գրանուկացված սուպերֆոսֆատը սերմի հետ հողը մտցնելիս ընկնում է հատիկին շատ մոտ, որի շնորհիվ բույսի զարգացման հենց առաջին շրջանում, երբ արմատները զենեա թույլ են լինում, ապահովում է բույսի ֆոսֆորական սննդատուլությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գրանուկացված սուպերֆոսֆատով պարարտացնելիս, բույսի արմատային սիստեմը ուժեղ զարգանում է և խորը թափանցելով, կարողանում է օգտվել հողում եղած խոնավությունից ու սննդարար նյութերից [4]:

Մեր փորձերում կալիումական պարարտանյութի ազդեցությունը եղել է փոփոխական. երբեմն նրանից ստացվել է որոշ էֆեկտ, երբեմն ոչ, նույնիսկ որոշ փորձերում այն եղել է բացասական: Այս փորձում կալիումից ստացվել է շատ թույլ էֆեկտ. կալիումի էֆեկտիվ կիրառման պայմանները մեր փորձերում չեն պարզված:

Կալիումական տարրեր պարարտանյութերի համեմատական ազդեցու-թյունը դարու բերքատվության վրա պարզելու համար 1953 և 1954 թթ. մեր

կողմից դրվեցին երկու սերիայով վեգետացիոն փորձեր- առաջինը՝ լրիվ ջրու- նակության 70% և երկրորդը 35% խոնավության պայմաններում:

Փորձերը դրվել են երկու կրկնողությամբ վեգետացիոն անոթների մեջ: Հավասարակշռման և դրենաժի համար օգտագործվել են մանր գլաբարեր: Հողը բերվել է Ապարանի շրջանի Քուչակ գյուղի «Չայլախներ» կոշվող հողամասից, որտեղ դրվել են նաև դաշտային փորձերը: Պարարտանյութերը տրվել են մա- քուր աղերի ձևով, (բացի սուպերֆոսֆատից) մեկ կիլոգրամ հողին 0,2 գրամ ներազդող նյութի հաշվով): Անոթները ջրվել են կշռելով: Ստորև բերվում են դիտումների տվյալները (աղյուսակ 10):

Աղյուսակ 10

Պարարտանյութերի ազդեցությունը զարու աճի վրա 1953 թ.

Փորձի սխեման	Բույսերի թիվը անոթում	Հասկերի թիվը		Մեկ բույսի հասկերի թիվը		Մեկ հասկի հատիկի կշիռը		Ցողունի եր- կարությունը սմ-ով		Հասկի եր- կարությունը սմ-ով	
		70% խո- նավու- թ.	35% խո- նավու- թ.	70	35	70	35	70	35	70	35
Առանց պարարտացման	10	3,0	10,0	0,30	1,00	0,1	0,14	17,6	22,71	1,66	2,03
PK (բլորեդ)	10	10,0	10,0	1,00	1,00	0,22	1,29	24,4	27,09	2,65	3,90
NK	10	17,5	11,0	1,75	1,10	0,34	1,28	30,01	28,56	4,48	3,62
NP	10	30,0	16,5	3,10	1,65	0,51	1,43	39,46	31,81	5,0	4,55
NPK(սուլֆատ)	10	28,0	19,5	2,80	1,95	0,43	1,36	39,65	29,99	4,99	4,11
NPK (բլորեդ)	10	34,5	17,0	3,45	1,70	0,38	1,38	41,34	30,03	4,75	4,29
NPK(նիտրատ)	10	31,0	15,5	3,10	1,55	0,49	1,34	43,0	29,73	4,96	4,31
NPK (մոխիր)	10	25,0	14,0	2,50	1,40	0,48	1,41	36,98	30,11	5,03	4,96

Ինչպես տեսնում ենք աղյուսակի տվյալներից չպարարտացված և PK վա- րիանտներում բույսերը ավելի թույլ են աճել, որը մեկ անգամ ևս հաստատում է, որ Ապարանի շրջանի շագանակագույն հողերը առաջին հերթին խիստ պա- հանջ ունեն ազոտական պարարտանյութերի: Պարարտացված բոլոր վարիանտ- ներում բույսերը փարթամ են եղել:

Ստորև բերում ենք վեգետացիոն փորձի տվյալները (աղյուսակ 11):

Նախ և առաջ հաստատվում է աննդանյութերի խիստ արտահայտված կա- րիքը փորձի տակ եղած հողի մեջ:


Փորձարկված բոլոր վարիանտներում բույսերը նորմալ աճել են լրիվ ջրու- նակության 70%-ի պայմաններում, որտեղ բերքը 35% խոնավության համե- մատությամբ, եղել է կրկնակի: 1954 թ. փորձերում այդ երևույթը թույլ է ար- տահայտվել, որովհետև մի քանի անակնկալ անձրևների հետևանքով նախա- տեսված է 35% խոնավությունը բարձրացել է, և բերքի տարբերությունը պակա- սել: Վեգետացիոն փորձերով չպարզաբանվեց կալիումի ֆիզիոլոգիական դերը բույսերի շրթադիմացկանության համար: Սակայն նրանք հաստատեցին դաշ- տային փորձերում ստացված մյուս օրինաչափությունները, այն է՝ Ապարանի շրջանի շագանակագույն հողերի վրա հացահատիկային կուլտուրաները առա- ջին հերթին խիստ կարիք ունեն ազոտի, ապա ֆոսֆորի, իսկ կալիումից էֆեկտ չի ստացվում:

Հետաքրքրական է նշել, որ կալիումական տարբեր պարարտանյութերից

Պարարտանյութերի ազդեցությունը դարու բերքի վրա հողի լրիվ ջրունակության 70%-ի և 35%-ի պայմաններում (վեգետացիոն փորձեր)

Փորձի սխեման	1953 թ.		1954 թ.				Երկու տարվա միջին			
	չոր մասսան գ-ով		հատիկի կշիւրը գ-ով		չոր մասսան գ-ով		հատիկի կշիւրը գ-ով		հատիկի կշիւրը գ-ով	
	70 ⁰ / ₀	35 ⁰ / ₀	70	35	70	35	70	35	70	35
Ատանց պարարտացման	1,30	3,40	0,32	1,37	3,50	3,50	1,00	0,9	0,66	1,13
PK (բլորիդ)	5,09	5,85	2,24	1,90	—	—	—	—	2,24	1,90
NK »	15,10	7,75	5,97	3,14	—	—	—	—	5,97	3,14
NP	32,55	16,49	15,55	7,08	25,3	17,05	7,65	6,4	11,60	6,71
NPK (սուլֆատ)	28,79	17,20	12,05	7,11	25,7	18,70	7,65	6,2	9,85	6,66
NPK (բլորիդ)	32,71	14,93	13,41	6,47	26,1	19,00	6,85	6,0	10,13	6,23
NPK (նիտրատ)	34,70	18,58	15,25	6,81	24,3	18,00	5,80	6,5	19,52	6,15
NPK (մոխիր)	26,20	16,42	12,15	5,80	—	—	—	—	—	—

Համարյա նույն էֆեկտն է ստացվել: Հետևապես Ապարանի շրջանում Կալիումից ստացված թույլ էֆեկտը չի կարելի բացատրել քլոր իոնի բացասական ազդեցությամբ: Այդ աճելի պարզ կերպով կարելի է տեսնել № 1 նկարում:



Նկ. 1.

- | | |
|------------------|---------------------|
| 22 NPK (մոխիր) | 34 NK (բլորիդ) |
| 18 NPK (նիտրատ) | 26 N |
| 14 NPK (բլորիդ) | 30 PK (բլորիդ) |
| 10 NPK (սուլֆատ) | 2 ատանց պարարտացման |
| 6 NP | |

ԳԱՐՆԱՆԱՅԱՆ ՅՈՐԵՆԻ ՊԱՐԱՐՏԱՅՄԱՆ ՓՈՐՁԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանում մշակվող հացահատիկային կուլտուրաների ցանքատարածության մոտ 40%-ը կազմում է դարնանացան ցորենը, ուստի նրա բերքատվության բարձրացումը շատ կարևոր խնդիր է: Գարնանացան ցորենն աշնանացանի համեմատությամբ ունի ավելի կարճ վեգետացիա, հետևապես նրա սննդանուրջի հարցերը պետք է կարգավորել այնպես, որ այդ ժամանակամիջոցում բույսերը իրենց աճման ու զարգացման բոլոր ֆազերում ապահովված լինեն անհրաժեշտ քանակի սննդանյութերով:

Մեր փորձերում պարարտանյութերը տրվել են հեկտարին 60 կգ ներազդող նյութի հաշվով: 1951 թ. փորձերը դրվել են սևահողի վրա, իսկ 1953 և 1954 թթ. շագանակագույն հողերի վրա:

Փորձերում կատարվել են բույսերի թփակավման, հասկակավման, հատիկի ելունքի և այլ դիտումներ (աղյուսակ 12):

Աղյուսակ 12

Հանքային պարարտանյութերի ազդեցությունը էրինացեում սորթի աճի ու զարգացման վրա (1951 թ.)

Փորձի սխեման	Ցողունների թիվը 1 բ. մ	Երկարությունը սմ-ով		Մեկ բույսի վրա հասկերի թիվը	Մեկ հասկի մեջ եղած հատիկի կշիռը	1000 հատիկի կշիռը
		ցողունի	հասկի			
Առանց պարարտացման	769	79	4,3	1,28	0,47	39,96
N ₆₀	840	94	4,5	1,57	0,55	40,73
N ₆₀ P ₆₀	860	95	3,6	1,95	0,54	40,21
N ₆₀ P ₆₀ K ₆₀	795	97	5,1	2,02	0,60	41,93

Պարարտացման շնորհիվ ստացվել է բերքի նկատելի հավելում (աղյուսակ 13):

Աղյուսակ 13

Հանքային պարարտանյութերի ազդեցությունը զարնանացան ցորենի (էրինացեում) բերքի վրա ց/հ

Փորձի սխեման	1951 թ. սևահողի վրա					1954 թ. շագանակագույն հողի վրա				
	միջին բերքը	բերքի հավելումը	±	-	համապատասխան չոր հյուսիս	միջին բերքը	բերքի հավելումը	±	-	համապատասխան չոր հյուսիս
Առանց պարարտացման	22,25	—	—	—	11,80	6,88	—	0,67	—	11,91
N ₆₀	26,10	3,85	0,43	8,95	11,87	8,46	1,58	0,49	1,91	13,22
N ₆₀ P ₆₀	29,52	7,27	1,19	6,11	11,66	9,84	2,96	0,61	3,29	13,28
N ₆₀ P ₆₀ K ₆₀	28,02	5,77	1,16	4,97	12,67	8,63	1,75	0,27	2,44	12,19

1951 թ. բերքի հավելումը և պարարտանյութերի էֆեկտիվությունը ավելի բարձր է եղել, քան 1954 թվականին: 1951 թվականի փորձերը դրվել են սևահողերի պայմաններում, բայց բերքի նման տարբերությունը չի կարելի բացատրել միմիայն դրանով, կարևոր դեր է խաղացել նաև մթնոլորտային տեղումների քանակը, որը 1954 թ. անհամեմատ պակաս է եղել: Այնուամենայնիվ ստացվել են միևնույն օրինաչափությունը, այն է՝ N > P > K: Այս օրինաչափությունը ստացվել է նաև աշնանացան ցորենի պարարտացման փորձերում:

Պարարտանյութերի շնորհիվ բարձրացել է նաև հում պրոտեինի քանակությունը հատիկի մեջ:

Ազոտի անոդ դոզաների ազդեցությունը գարնանացան (երինացեում) ցորենի բեռի քանակի և որակի վրա

Ինչպես արդեն ասացինք գարնանացան ցորենն ունի կարճ վեգետացիոն շրջան 80—110 օր: Հետևապես նրա նորմալ աճի համար այդ ժամանակամիջոցում անհրաժեշտ է նույնքան սննդանյութ, ինչ որ երկար վեգետացիա ունեցող աշնանացան ցորենի համար:

Գարնանացան ցորենի արմատային սխտեմը աշնանացան ցորենի համեմատությամբ, ավելի թույլ է զարգացած: Ուստի անհրաժեշտ է գարնանացանը ապահովել մատչելի սննդանյութերով: Ակադեմիկոս Գ. Ն. Պրյանիշնիկովը նշել է, որ «Երկրագործության ամբողջ պատմությունն Արևմտյան եվրոպայում, վկայում է այն մասին, որ տարրեր զարաշրջաններում բերքի միջին բարձրությունը որոշող գլխավոր պայմանը, եղել է գյուղատնտեսական բույսերի ազոտով ապահովված լինելու աստիճանը» [6]:

Մեր փորձերում ֆոսֆորակալիումական ֆոնի վրա փորձարկվել են ազոտի մի շարք դոզաներ: Հետագայում որոշ վարիանտներ կրճատվել են թողնելով միմիայն այն դոզաները, որոնք ավելի մեծ էֆեկտ են տվել: Փորձում կատարվել են մի շարք դիտումներ, որոնք (հարյուր բույսի միջինը) բերում ենք ստորև (աղյուսակ 14):

Աղյուսակ 14

Ազոտի անոդ դոզաների ազդեցությունը գարնանացան (երինացեում) ցորենի աճի ու զարգացման վրա (1953 թ.)

Փորձի սխեման	1 ² մ եղած ցողունների թիվը	Ցողունների բարձրությունը սմ-ով	Հասկի երկար. սմ-ով	Մեկ հասկի մեջ հատիկի բաշը գ-ով	Մեկ բառկուտի մեում եղած մասսայի բաշը կգ
Առանց պարարտացման	348,0	51,0	3,4	0,34	0,382
P ₇₅ K ₆₀	489,7	49,0	3,1	0,23	0,245
N ₃₀ P ₇₅ K ₆₀	364,0	57,2	3,8	0,45	0,462
N ₆₀ P ₇₅ K ₆₀	371,0	65,2	4,8	0,46	0,517
N ₇₅ P ₇₅ K ₆₀	416,3	62,4	4,3	0,50	0,605
N ₉₀ P ₇₅ K ₆₀	401,2	68,1	5,1	0,47	0,644
N ₁₂₀ P ₇₅ K ₆₀	512,0	70,5	5,2	0,54	0,832
N ₁₂₀ P ₁₂₀ K ₆₀	471,0	69,3	4,6	0,47	0,877
N ₁₅₀ P ₁₂₀ K ₆₀	521,0	73,2	5,1	0,56	0,792
N ₁₅₀ P ₁₅₀ K ₉₀	521,0	72,3	4,9	0,60	0,850

Այն վարիանտներում, որտեղ ազոտ չի տրվել, կամ տրվել է փոքր դոզայով պարարտանյութերի էֆեկտը փոքր է եղել: Պարարտանյութերի բարձր էֆեկտիվությունը հաստատվում է բերքատվության ավյալներով (աղյուսակ 15):

Ինչպես կարելի է տեսնել բերքատվության ավյալներից պարարտացումից ստացված հավելումը տատանվում է 0,51—6,24 ցենտների միջև: Ամենից մեծ էֆեկտ ստացվել է N₁₈₀P₁₈₀K₉₀ վարիանտից, որտեղ բերքի հավելումը կազմում է 6,24 ց. իսկ եթե համեմատելու լինենք N₉₀P₇₅K₆₀ կոմբինացիայից ստացված հավելման հետ — 4,21, ապա տարբերությունը կազմում է 2,03 ց/հ, հետևապես ներկայում տնտեսապես ձեռնառու չէ օգտագործել կրկնակի բանակի պարարտանյութեր և ստանալ այդպիսի հավելում:

Ուստի Ապարանի շրջանում կիրառվող ազոտի խնդիր պայմաններում գարնանացան ցորենի հիմնական պարարտացման համար կարելի է հանձնա-

Ազոտի ածող դոզաների ազդեցությունը դարձանացան (էրինացեում) ցորենի բերքի վրա ց/հ

Փորձի սխեման	1953 թ.					1954 թ.				
	միջին բերքը	բերքի համ- վելումը	±	—	Հում պրոտեինի % / 100 բացարձակ չոր նյութից	միջին բերքը	բերքի համ- վելումը	±	—	Հում պրոտեինի % / 100 բացարձակ չոր նյութից
Առանց պարար- տացման	4,86	—	0,31	—	11,97	6,88	—	0,67	—	11,91
P ₇₅ K ₆₀	4,35	0,51	0,36	—	11,97	—	—	—	—	—
N ₉₀ P ₇₅ K ₆₀	6,42	1,56	0,51	2,51	11,80	—	—	—	—	—
N ₉₀ P ₇₅ K ₆₀	7,81	2,95	0,63	4,21	11,97	8,63	1,75	0,27	2,44	12,19
N ₇₅ P ₇₅ K ₆₀	8,17	3,31	0,70	4,31	12,43	—	—	—	—	—
N ₉₀ P ₇₅ K ₆₀	9,07	4,21	0,59	6,34	12,31	10,55	3,67	0,47	4,54	12,37
N ₁₂₀ P ₇₅ K ₆₀	10,45	5,59	1,10	4,90	13,28	10,07	3,19	0,34	4,28	12,54
N ₁₂₀ P ₁₂₀ K ₆₀	9,54	4,68	0,54	7,51	13,28	—	—	—	—	—
N ₁₈₀ P ₁₂₀ K ₆₀	9,20	4,34	0,52	7,11	13,57	—	—	—	—	—
N ₁₈₀ P ₁₈₀ K ₆₀	11,10	6,24	0,50	12,46	14,36	—	—	—	—	—

րարել N₉₀P₇₅K₆₀ կոմբինացիան: Ազոտեինի կալի մակարդակի բարձրացման զուգընթաց կփոխվեն նաև պարարտացման նորմաները:

Պարարտացումը դրական ազդեցություն է ունեցել հատիկի մեջ հում պրո- տեինի պարունակության ավելացման վրա:

Պարարտացման ժամկետների ազդեցությունը զարնանացան ցորենի բերքի վրա

Պարարտացման էֆեկտիվությունը կախված է նաև պարարտանյութերի հողը մուծելու ժամկետներից: Հայտնի է, որ տեղումներով ոչ աղքատ շրջան- ների ծանր կավային հողերում պարարտանյութերից, հատկապես ֆոսֆորակա- նից և կալիումականից բարձր էֆեկտ է ստացվում, երբ այն տրվում է աշնանից ցրտահերկի տակ: Ստորև բերվում են մեր փորձերի արդյունքները Ապա- րանի շրջանում դարձանացան ցորենի բերքի վրա պարարտանյութերի մուծման ժամկետների ազդեցության վերաբերյալ (աղյուսակ 16):

Պարարտացման ժամկետների ազդեցությունը դարձանացան (էրինացեում) ցորենի բերքի վրա ց/հ

Պարարտացման ժամկետը	Հիմնական վարի տակ	դարձանը ննուցում	1953 թ.				1954 թ.			
			միջին բերքը	բերքի համ- վելումը	±	—	միջին բերքը	բերքի համ- վելումը	±	—
Առանց պարար- տացման	—	—	4,67	—	0,53	—	4,96	—	0,52	—
N ₇₅	—	—	4,72	0,05	0,44	—	7,33	2,37	0,66	2,82
N ₇₅	N ₇₅	—	6,13	1,46	0,78	1,55	9,86	4,90	1,37	3,31
N ₇₅ P ₇₅	—	—	9,40	4,75	0,63	5,77	10,02	5,06	1,0	4,48
N ₇₅ P ₇₅	N ₇₅ P ₇₅	—	8,26	3,59	0,84	3,62	10,34	5,38	0,77	5,82
N ₄₅ P ₇₅	N ₃₀	—	8,78	4,11	0,67	4,81	—	—	—	—
P ₇₅ K ₆₀	—	—	8,54	3,87	0,69	4,45	—	—	—	—
P ₇₅ K ₆₀	N ₇₅	—	8,22	3,55	0,91	3,39	10,22	5,26	1,41	3,53
N ₄₅ P ₇₅ K ₆₀	N ₃₀	—	10,05	5,38	0,54	7,08	9,16	4,20	1,11	3,41
N ₇₅ P ₇₅ K ₆₀	—	—	11,68	7,01	0,49	9,65	8,83	3,87	0,66	4,62

Տվյալները ցույց են տալիս, որ 1953 և 1954 թվականներին ստացել են տարբեր օրինաչափություններ: 1953 թ. աշնանից տրված բոլոր կոմբինացիաներում պարարտանյութերն ավելի բարձր էֆեկտ են տվել, իսկ 1954 թ. պարարտանյութերի թե՛ աշնան և թե՛ գարնան մուծման վարիանտներում ստացվել է նույնանման բարձր էֆեկտ: Այդ երևույթը մեր կարծիքով պետք է բացատրել տեղումների տարբեր քանակով: Այսպես, օրինակ՝ 1952 թ. սեպտեմբերի 20-ից մինչև 1953 թ. մայիսի 20-ը, այսինքն պարարտացումից մինչև ցանքսը, տեղումների քանակը եղել է՝ 375,2 մմ, 1954 թ. նույն ժամանակամիջոցում եղած 429,7 մմ դիմաց: Հետևապես խոնավության համեմատաբար առատ պայմաններում ազոտական պարարտանյութերի մի մասը լվացվել է և բույսերը լրիվ չեն օգտվել նրանից: Հատիկի մեջ հում պրոտեինի պարունակության տվյալները բերում ենք 17-րդ աղյուսակում:

Աղյուսակ 17

Պարարտացման ժամկետների ազդեցությունը հատիկի մեջ հում պրոտեինի պարունակության վրա (բացարձակ չոր նյութից %/0-ով)

Պարարտացման ժամկետը		Հիգրոսկոպիկ խոնավությունը	Հում պրոտեին (N×5,7)	1000 հատիկի զիբը
հիմնական վարիտակ	գարնանը սնուցում			
Առանց պարարտացման	—	11,70	11,97	25,85
N ₇₅ —	—	11,65	13,40	26,77
—	N ₇₅ —	11,79	13,00	27,23
N ₇₅ P ₇₅ —	—	12,10	14,31	27,70
—	N ₇₅ P ₇₅ —	11,76	12,94	28,56
N ₄₅ P ₇₅ —	N ₃₀ —	11,43	13,68	28,63
P ₇₅ K ₆₀ —	—	11,30	12,65	30,53
P ₇₅ K ₆₀ —	N ₇₅ —	11,46	13,00	28,10
N ₄₅ P ₇₅ K ₆₀ —	N ₃₀ —	11,35	14,19	27,72
N ₇₅ P ₇₅ K ₆₀ —	—	11,44	14,09	27,20

NPK վարիանտում հում պրոտեինի պարունակությունը եղել է 14,08% կոնտրոլի՝ 11,97% դիմաց: Պարարտացումը դրական է ազդել նաև հատիկի բացարձակ քաշի վրա:

Այսպիսով, Ապարանի շրջանում խոնավության բավարար պայմաններում կարելի է հանձնարարել ֆոսֆորատի և կալիումական պարարտանյութերը տալ աշնանը: Ազոտական պարարտանյութերի մի մասը՝ տալ աշնանը, իսկ մյուս մասը՝ վաղ գարնանը՝ կուլտիվացիայի տակ, կամ նույնիսկ ամբողջովին տեղափոխել գարնանը: Չորային պայմաններում, նպատակահարմար է ազոտական պարարտանյութերը տալ աշնանը՝ հիմնական վարի տակ:

Հանձնախն և օրգանական պարարտանյութերի համատեղ կիրառման ազդեցությունը զարնանացան ցորենի բերքի բաճակի և որակի վրա

Գոմաղբի կիրառումն անհրաժեշտ է ոչ միայն որպես սննդանյութերի աղբյուր, այլ նաև որպես հողի ֆիզիկական հատկությունը բարելավելու և վազույն միջոց: Բացի այդ գոմաղբի առկայությամբ հողում ակտիվանում են միկրոբիոլոգիական պրոցեսները:

Սակայն միշտ չէ, որ զոմաղբի կիրառումից ստացվում է դրական էֆեկտ: Սխալ պարարտացման հետևանքով երբեմն զոմաղբից ոչ միայն դրական էֆեկտ չի ստացվում, այլ նույնիսկ երբեմն նկատվում է բացասական ազդեցություն:

Գոմաղբից ստացվող էֆեկտը կախված է նրա որակից և հողակլիմայական պայմաններից:

Մենք փորձարկել ենք կոլտնտեսության պահպանված զոմաղբի ազդեցությունը դարձնանացան էրինացեում ցորենի բերքի բանակի և տրակի վրա: Ստորև բերում ենք փորձնական խրճի ստրուկտուրային անալիզի տվյալները (աղյուսակ 18):

Աղյուսակ 18

Խրճի ստրուկտուրային անալիզը ըստ պարարտացման վարիանտների

որձի սխեման	1 մ ² կգած ցորենի բերքը	1 մ ² կգած մասսայի բաշը կգ-ով	Ցորենի բարձրություն-ով	Հասկի երկարությունը	Մեկ հասկի հատիկի կշիռը գ-ով	1000 հատիկի կշիռը գ-ով
Առանց պարարտացման	435	0,27	49,1	3,3	0,30	24,59
Գոմաղբ 20 տ/հ	389	0,26	47,8	3,0	0,26	25,40
Գոմաղբ 10 տ/հ + N ₃₀ P ₃₀ K ₃₀	478	0,41	55,2	4,2	0,41	29,30
Գոմաղբ 1 տ/հ + N ₆₀ P ₆₀ K ₆₀	451	0,61	64,8	5,4	0,53	29,56
N ₆₀ P ₆₀ K ₆₀	460	0,56	67,2	4,7	0,50	28,47

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ զոմաղբից էֆեկտ չի ստացվել նման պատկեր է ստացվել նաև բերքատվություն չունեցող տվյալներում (աղյուսակ 19):

Աղյուսակ 19

Հանքային և օրգանական պարարտանյութերի ազդեցությունը դարձնանացան ցորենի բերքի վրա

Փորձի սխեման	1953 թ.				1954 թ.			
	բերքը	հավելումը	±m	t	բերքը	հավելումը	±m	t
Առանց պարարտացման	4,78	—	0,36	—	6,88	—	0,67	—
Գոմաղբ 20 տ/հ	4,34	0,44	0,61	—	7,02	0,14	0,60	0,16
Գոմաղբ 10 տ/հ + N ₃₀ P ₃₀ K ₃₀	6,21	1,43	0,67	1,88	12,06	—	—	—
1 տ/հ + N ₆₀ P ₆₀ K ₆₀	8,42	3,64	0,49	5,10	—	5,18	0,81	4,98
N ₆₀ P ₆₀ K ₆₀	8,43	3,65	0,61	5,14	—	—	—	—
N ₃₀ P ₇₅ K ₉₀	6,42	1,56	0,51	2,60	—	—	—	—
N ₆₀ P ₆₀	—	—	—	—	10,34	6,38	0,77	5,82

Մեր փորձերում էֆեկտ չի ստացվել նաև զոմաղբի փոքր դոզաների կիրառումից, այսպես, օրինակ՝ 1953 թ. N₆₀P₆₀K₆₀ կոմբինացիայից ստացվել է 8,43 ց բերք, 1 տ/հ զոմաղբ N₆₀P₆₀K₆₀ վարիանտի 8,42 ց/հ դիմաց: Հետևապես այս փորձերում ոչ առանձին և ոչ էլ հանքային պարարտանյութերի հետ

օդատագործելիս գումադրից էֆեկտ չի ստացվել: Այս կրեուլթը մասամբ պետք է բացատրել գումադրի ցածր որակով (ընդհ. ազոտի պարունակությունը 0,37%, իսկ P_2O_5 —0,67). Հավանաբար այստեղ դեր են խաղացել նաև հողի միկրոֆլորայի և կլիմայական պայմանների առանձնահատկությունները:

Գարնանացան ցորենի սնուցումը

Նրբամի այս կամ այն պատճառով գարնանացանի դաշտերը չեն պարարտացվում մինչև ցանքը. նման դեպքերում անհրաժեշտ է լինում պարարտացնել դաշտը սնուցման կարգով:

Փորձերում կատարվել է խրձի ստրուկտուրային անալիզ, որի տվյալներից երևում է, որ պարարտացումը դրական ազդեցություն է ունեցել բույսերի աճի, հասկավորման և հատիկի ելունքի վրա (աղյուսակ 20):

Աղյուսակ 20

Սնուցման ազդեցությունը գարնանացան ցորենի բերքի վրա ց/հ

Փորձի սխեման	1951 («Աղբրի ջրեր») հանդամասում			
	միջին բերքը	բերքի հավելումը	±m	t
Առանց պարարտացման	6,54	—	—	—
N ₄₀	8,65	2,11	0,60	3,51
N ₄₀ P ₄₀	9,42	2,88	0,64	4,50
N ₄₀ P ₄₀ K ₄₀	9,63	3,09	0,75	3,05

Սնուցումն ապահովել է բերքի զգալի հավելում: Փորձը կրկնել ենք նաև 1952 թվականին և ստացել նույն օրինաչափությունը, սակայն երաշտի պատճառով բերքի մակարդակը խիստ ցածր է եղել: Աղոտական սնուցումից առավել բարձր էֆեկտ է ստացվում: 1951 թ. նույն գյուղում 2000 ք. մ ստարածության վրա կատարեցինք արտադրական փորձ. 1000 ք. մ տրվեց N₄₀P₄₀K₄₀ սնուցում, իսկ մնացած 1000-ը թողնվեց առանց պարարտացման: Սնուցման շնորհիվ ստացվեց 2,5 ց/հ լրացուցիչ բերք:

Հետևապես, եթե որևէ պատճառով գարնանացանի դաշտը չի պարարտացվել, ապա անհրաժեշտ է այն սնուցել վաղ գարնանը և լավ փոցխել:

Ամփոփելով ցորենի պարարտացման ուսումնասիրությունների արդյունքները կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Ապարանի շրջանի հողակլիմայական պայմաններում, որտեղ հողը ապահովված չէ մատչելի սննդանյութերով պարարտացումը հանդիսանում է գարնանացան ցորենի բերքատվության բարձրացման կարևորագույն միջոցներից մեկը:

2. Տարբեր պարարտանյութերն ըստ իրենց էֆեկտիվության հետևյալ նվազող կարգն են ներկայացնում՝ N>P>K կալիումից ստացված էֆեկտը փոփոխական է: Այդ հարցը մեր փորձերով լրիվ չի պարզաբանված:

3. Ներկայումս կիրառվող ազոտեխնիկայի ֆոնի վրա գարնանացան ցորենը կարելի է պարարտացնել հետևյալ դոզայով N₉₀P₇₅K₆₀, որից, երկու տարվա միջին տվյալներով, հեկտարից մոտ 4 ց հատիկի բերքի հավելում է ստացվել: Իսկ աշնանացան ցորենին հանձնարարում ենք՝ N₇₅P₇₅K₆₀, որից

քերքի հավելումը կազմել է հեկտարից մոտ 6 ց: Այս նորման օրինակը է և կարող է տեղում փոխվել:

4. 1954 թ. մթնոլորտային տեղումների համեմատաբար առատության պայմաններում, գարնանացան ցորենի բարձր բերք ստացվել է, թե աշնանից և թե՛ գարնանը պարարտացնելու դեպքում, իսկ 1953 թ. չորային պայմաններում առավել բարձր բերք է ստացվել աշնանը պարարտացնելու դեպքում: Բավարար խոնավության պայմաններում, կարելի է հանձնարարել ֆոսֆորը և կալիումը տալ աշնանից, հիմնական վարի տակ: Աղոտական պարարտանյութերի մի մասը տալ աշնանը, իսկ մյուս մասը՝ վաղ գարնանը. չորային պայմաններում՝ ընդհակառակը պարարտանյութերը պետք է տալ աշնանը՝ ցրտահերկի ժամանակ:

5. Պարարտացման փորձարկված ժամկետներից լավ էֆեկտ ստացվել է այն դեպքում, երբ աղոտական պարարտանյութերի նախատեսված նորմայի մի մասը տրվել է աշնանը հիմնական վարի տակ, իսկ մյուսը՝ վաղ գարնանը սնուցման ձևով:

6. Ցորենի վաղ գարնանային սնուցման դեպքում բարձր էֆեկտ ստացվում է միայն աղոտական պարարտանյութերից, իսկ ֆոսֆորից և կալիումից էֆեկտ չի ստացվում:

7. Մեր երկու տարվա փորձերում գոմաղբը, թե՛ առանձին և թե՛ հանքային պարարտանյութերի հետ համատեղ էֆեկտ չի տվել: Այս երևույթն արժանի է հատուկ ուսումնասիրության:

8. 10 կգ ներազդող նյութի հաշվով հատիկավորված սուպերֆոսֆատը, սերմի հետ հողը մտցնելու դեպքում ստացվում է համարյա նույն էֆեկտը, ինչ որ 75 կգ (ներազդող նյութի հաշվով) սովորական սուպերֆոսֆատը ցանրից առաջ հավասարաչափ սփռելու դեպքում:

9. Պարարտանյութերը բարձրացնում են հատիկի մեջ հում պրոտեինի պարունակությունը. նշանակում է պարարտացման շնորհիվ ստացվում է լավ որակ և բարձր բերք:

10. Մեր փորձերում պարարտանյութերը բարձրացրել են բույսերի ցրտահիմացկունությունը:

И. К. БАБАДЖАНИЯ

ВЛИЯНИЕ УДОБРЕНИЙ НА УРОЖАЙ ПШЕНИЦЫ В АПАРАНСКОМ РАЙОНЕ

Резюме

Результаты исследований по удобрению пшеницы, проведенных в производственных условиях колхоза с. Кучак в 1951—1954 гг., позволяют заключить следующее:

1. В почвенно-климатических условиях Апаранского района, где почвы бедны доступными для растений питательными веществами, удобрение является одним из важнейших средств повышения урожайности пшеницы.

2. Эффективность различных видов удобрений представляет следующий порядок, $N > P > K$. Эффект от калия не постоянен и требует более детального изучения.

3. На фоне применяющейся агротехники под яровую пшеницу можно рекомендовать следующие дозы удобрения $N_{90}P_{75}K_{60}$. Такая норма в среднем за 2 года обеспечила прибавку урожая в 4 ц с гектара.

Под озимую пшеницу на гектар следует вносить $N_{75}P_{75}K_{60}$ действующего начала. В этом случае прибавка составила 5,9 ц/га. Нормы эти ориентировочны и могут быть уточнены на местах.

4. В условиях влажного 1954 г. высокий урожай яровой пшеницы был получен в результате весеннего внесения удобрений под культивацию, прибавка при этом не уступала осеннему внесению удобрений.

В засушливых условиях 1953 г. урожай был выше при внесении удобрений с осени (по сравнению с весенним удобрением).

5. При ранней весенней подкормке наблюдается высокая эффективность азотного удобрения.

Подкормка фосфорными и калийными удобрениями обеспечивает незначительный эффект.

6. В результате испытания сроков удобрения озимой пшеницы, наибольший эффект получен при дробном внесении предвиденной нормы азотного удобрения (под осеннюю основную пахоту и ранней весной в виде подкормки).

7. Гранулированный суперфосфат, в дозе 10 кг действующего начала, внесенный с семенами, дает такой же эффект, как суперфосфат, содержащий 75 кг действующего начала, но внесенный вразброс перед предпосевной культивацией.

8. В результате наших двухлетних исследований выяснилось, что навоз не дает эффекта как при отдельном его внесении, так и при внесении совместно с минеральным удобрением. Причины этого факта должны быть исследованы дополнительно.

9. В наших опытах удобрения повышали зимостойкость растений пшеницы: например в варианте $N_{60}P_{75}K_{60}$ процент пострадавших от мороза растений составляет 17,2% против — 23,4% в неудобренном варианте.

10. Удобрения значительно повышали содержание азота и сырого протеина в зерне.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

1. Աղաջանյան Գ. Խ. — Հայկական ՍՍՌ-ում տարածված աշնանայան և գարնանայան սորենի հիմնական սորակերը և նրանց մշակութայինը, Հայպետհրատ, Երևան, 1951 թ.:
2. Աղաջանյան Գ. Խ., Քոչարյան Ա. Ա., Խրիմլյան Ս. Ի., Բաղդասարյան Ա. Բ. — Հայկական ՍՍՌ գյուղատնտեսական գոտիները Գյուղ. մինիստր. դեպարտ. Գլխավոր վարչութ. հրատարակչ., Երևան, 1956 թ.:
3. Ասլանյան Գ. Շ. — Հացահատիկային կուլտուրաների պարարտացումը, Հայպետհրատ, Երևան, 1951 թ.:

4. Авакян М. Г. Действие грануляции на эффективность удобрений в основных почвенных типах Армении. Автореферат диссертации, 1953.
5. Микаелян Л. Н. Влияние различных удобрений на анатомическую структуру однолетнего побега винограда. Известия Акад. наук АрмССР, том XII, № 12, 1954.
6. Найдин П. Г. Удобрение зерновых культур. Изд. сельхоз. лит. М., 1948.
7. Прянишников Д. Н. Частное земледелие, 1931, М.
8. Сердабольский И. П. Калий, М.—Л., АН СССР, 1944.